

Հայաստանի Հանրադատության

**կառավարության
2005 թվականի
գործունեության
հաշվետվություն**

**Activity report
of the Government
of the
Republic
of Armenia**

ԵՐԵՎԱՆ 2006 YEREVAN

Ներածություն

Վերջին տարիներին իրականացվող տնտեսական, սոցիալական և կառավարման բարեփոխումները հնարավորություն են տալիս լուծելու երկրի առջև ծառայած հիմնախնդիրները, ինչի վկայությունն են շարունակական բարելավվող ցուցանիշները: Այսպես, շարունակվում է ՀՆԱ-ի իրական աճի երկնիշ ցուցանիշի արձանագրումը, և 2005 թվականը այդպիսի աճի արձանագրման 4-րդ անընդմեջ տարին է: Արդյունքում՝ 2000–2005 թվականների տնտեսության իրական աճը միջինում կազմել է տարեկան 11.2 տոկոս, ինչն աննախադեպ բարձր ցուցանիշ է Հայաստանում տնտեսական աճի գրանցման ամբողջ ընթացքում: Տնտեսական աճի արդյունքում, 2005 թվականին ՀՆԱ-ի մակարդակը գերազանցել է 1989 թ. տնտեսության մակարդակը 14,1 տոկոսով:

2005 թվականին շարունակվել է արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը, որի շրջանակներում հատկապես հատկանշական է հարկային և մաքսային վարչարարության բարելավումը: Նվազել է նաև Հայաստանի բյուջեի կատարման կախվածությունը փոխառու միջոցներից: Այսպես, 2005 թվականին, ի տարբերություն նախորդ տարիների, հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերությունը 2004 թ. համեմատ բարելավվել է 0.3 տոկոսային կետով, իսկ պետական բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ հարաբերությունը 2005 թվականին, նախնական տվյալներով, կազմել է ՀՆԱ-ի մոտ 1.9 տոկոսը: Բյուջեի դեֆիցիտի կայունացման և դրա նկատմամբ ՀՆԱ-ի առաջանցիկ աճի շնորհիվ կառավարությանը հաջողվեց նաև կրճատել արտաքին պարտքի չափը, որը 2005 թվականին կազմել է ՀՆԱ-ի 23 տոկոսը:

Շարունակվել են սոցիալական ոլորտներում բարեփոխումները. կրթության, առողջապահության և սոցիալական ոլորտում իրականացված բարեփոխումների շնորհիվ պետության իրականացրած ծրագրերը դարձել են ավելի հասցեական և նպատակային:

Հաջողությամբ շարունակվել է միջազգային ֆինանսական հաստատությունների հետ իրականացվող զարգացման ծրագրերի գործընթացը: 2005 թվականին հատկանշական է Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում նախատեսված առաջին ծրագրի մշակման առաջընթացը, ինչի արդյունքում արդեն 2006 թվականի մարտի 27-ին հնարավոր եղավ ստորագրել շուրջ 235.6 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհային ծրագիր իրականացնելու վերաբերյալ համաձայնագիրը:

Ըստ ոլորտների կառավարության իրականացրած քաղաքականությունը և դրա արդյունքներն առավել մանրամասն ներկայացվում են ստորև:



S նրբասկան ոլորտ

2005 թվականին շարունակվել է տնտեսական ոլորտում հետևողական քաղաքականության իրականացումը: Այն ապահովվել է համապատասխան օրենսդրական դաշտի զարգացմամբ, ինչպես նաև օրենսդրության կիրառման հարցում հետևողականության և արդյունավետության բարձրացմամբ: Տարվա տնտեսական արդյունքները հաստատում են կառավարության կողմից նախորդ տարիների գործունեության արդյունքների կապակցությամբ նախկինում տրված այն զնախատականը, որ հաղթահարվել է անցումային տնտեսությանը բնորոշ դժվարությունների մեծ մասը:

Տնտեսության մեջ ազատական հարաբերությունների արմատավորման նպատակով մշակված մի քանի տասնյակ հիմնարար օրենքների առկայությունը հնարավորություն է տալիս կենտրոնանալ տնտեսական անվտանգության ապահովման, համաշխարհային տնտեսության մեջ ակտիվ ինտեգրման, գիտատեխնիկական և ինովացիոն զարգացման խնդիրների լուծման վրա:

2003 թվականից Հայաստանի անդամակցությունը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱԴԿ) էլ ավելի խորացրեց միջազգային տնտեսական համակարգին ինտեգրման գործընթացը, որի արդյունքում օրենսդրական դաշտը համապատասխանեցվեց միջազգայնորեն ընդունված սկզբունքներին և չափանիշներին: Վերջինս իր հերթին լուրջ խթան հանդիսացավ արտաքին տնտեսական հարաբերությունների ակտիվացման և օտարերկրյա ներդրումների ներգրավման համար՝ էապես նպաստելով երկրում տնտեսական ակտիվության բարձրացմանը:

Ինքնին խոսուն է այն փաստը, որ տնտեսական ազատականության աստիճանի զնահատմամբ Հայաստանը 157 երկրների մեջ զբաղեցնում է արդեն 27-րդ տեղը և որակվում որպես «հիմնականում ազատ», այն դեպքում, երբ 2004 թվականին Հայաստանը զբաղեցնում էր 42-րդ տեղը 155 երկրների մեջ: Մեկ այլ հեղինակավոր վարկանիշային զնահատմամբ, որն իրականացվում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) փորձագիտական խմբի կողմից արտահանմանը պաշտոնապես սատարող վարկերի տրամադրման կարգի համաձայն, ԳԳ-ին տրված ռիսկայնության գործակիցը դրական փոփոխություն կրեց՝ 7-րդ խմբից տեղաշարժվելով 6-րդ:

2002թ. ԳԳ կառավարությունը նախանշել է Հայաստանում զիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունները: 2005 թվականին մշակվել և հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն գործունեության հայեցակարգը», որում ամրագրված են կառավարության կողմից իրականացվող ինովացիոն քաղաքականության սկզբունքներն ու մոտեցումները: Վերջինիս հիման վրա մշակվել և հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման 2005-2010 թվականների ծրագիրը»:

2005 թվականի արդյունաբերական քաղաքականությունը հիմնականում նպատակաուղղվել է գործունեության հետագա կայունացմանը, արտահանման կողմնորոշում ունեցող արտադրությունների մրցունակության և նրանց արտադրանքի որակական ցուցանիշների բարելավմանը, օտարերկրյա ներդրումների ներգրավմամբ արտադրական հզորությունների լիարժեք և արդյունավետ օգտագործմանը, ինչպես նաև արտադրության կազմակերպման ժամանակակից մեթոդների և մոր տեխնոլոգիաների կիրառմանը:


Շարունակվել են նաև մտավոր սեփականության ոլորտի կատարելագործման աշխատանքները: Արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության ապահովման հետ կապված խնդիրների հետ միաժամանակ ուշադրություն է դարձվել բնագավառը կարգավորող իրավական դաշտի կատարելագործման աշխատանքներին, մասնավորապես բնագավառում միջազգային ընդունված նորմերի կիրառման ապահովման նպատակով մշակվել և արդեն ԳԳ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունվել է «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ԳԳ օրենքի նախագիծը՝ համապատասխան իրավական ակտերի փաթեթով:

2005 թվականին իրականացվել են տնտեսության մեջ տեխնիկական անվտանգության մոր, ժամանակակից համակարգի օրենսդրական հենքի ձևավորման աշխատանքները: «Տեխնիկական անվտանգության ապահովման պետա-

կան կարգավորման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո ընթանում է դրանից բխող և կիրարկման ապահովմանն ուղղված ենթաօրենսդրական ակտերի ընդունման գործընթացը:

Նշվածը մեկ անգամ ևս հաստատում է, որ մեկ տասնամյակից ավելի շարունակվող տնտեսական բարեփոխումների արդյունքում ստեղծված են բոլոր այն հիմքերը, որոնք անհրաժեշտ են Հայաստանի բնակչության կենսապայմանների բարելավման հարցում կայուն առաջընթացի համար:

Այլ կերպ ասած, անցումային շրջանի արդի փուլում համակարգային վերափոխումներիև ուղղված խնդիրները փոխարինվում են զարգացման ապահովման խնդիրներով:



Դրա ապացույցն է այն փաստը, որ 2005 թվականին տնտեսական զարգացումը շարունակում է բնութագրվել բարձր ցուցանիշներով: Այն շարունակում է մախորդ տարիների դրական զարգացումների շարքը, և ՀՆԱ-ի իրական աճը 2005 թվականին կազմեց 14,0 տոկոս: Արդյունքում՝ 2000-2005 թվականներին ՀՆԱ-ի իրական աճը ավելի քան կրկնակի գերազանցել է դրան մախորդող հինգ տարիների մույն ցուցանիշը: 2000-2005 թվականներին տնտեսության իրական աճը միջինում կազմել է 11.2 տոկոս:

2005 թվականին ՀՆԱ-ն գերազանցել է 1989 թվականի մակարդակը 14,1 տոկոսով: 2005 թվականին մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմեց 1524 ԱՄՆ դոլար:



Նախկին ԽՍՀՄ երկրների շարքում 2005 թվականի արդյունքով միայն Հայաստանին է հաջողվել գերազանցել 1989 թվականի ՀՆԱ-ի մակարդակը¹:

¹ Մեծբայթյան հանրապետությունների ընդհանուր աճի պաշտոնական տվյալները 2005 թվականի համար դեռևս բացակայում են, սակայն ԱՄՆ-ի գնահատականներով այն չի գերազանցի 7.1 տոկոսը: Արդյունքում այդ երեք պետությունների ՀՆԱ-ն կիսանի 1989 թվականի մակարդակին: Վրաստանի և Արդրվայի համար բերված են 2005 թվականի հունվար-սեպտեմբերի տվյալները:

Առաջիկա տարիներին հիմնական խնդիր պետք է դառնա եկամուտների բաշխման հավասարության ձգտելը:

Վերջին տարիներին մակրոտնտեսական քաղաքականությունն ուղղված է եղել տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովմանը,

զմային փոփոխականների կայունացմանը, մասնավոր հատվածի զարգացմանը, տնտեսվարող սուբյեկտների համար հավասար պայմաններ ապահովող մրցակցային և բարենպաստ ներդրմային միջավայրի ապահովմանը:



Տնտեսական և հարկաբյուջետային ոլորտներում իրականացվող քաղաքականությունն անմիջական ազդեցություն է ունեցել բնակչության դրամական եկամուտների աճի վրա: Միջին աշխատավարձերը 2005 թվականին կազմել են մոտ 52 հազար դրամ: Տարվա ընթացքում մասնավոր հատվածի համեմատությամբ (2004 թվականի համեմատությամբ աճը կազմել է 17.3 տոկոս) բյուջետային հատվածի աշխատողների աշխատավարձերն ունեցել են առաջանցիկ աճ՝ 2004 թվականի համեմատությամբ աճելով 23.6 տոկոսով: Արդյունքում՝ 2000-2005 թվականներին բնակչության դրամական եկամուտների տարեկան աճը միջին հաշվով կազմել է 12,8 տոկոս, ընդ որում, 2005 թվականին՝ 15.0 տոկոս:



Մ ներդրումներ

Տ նտեսական զարգացման հուսալի երաշխիք է ներդրումների շարունակվող աճը: Օտարերկրյա ներդրումները Հայաստանի տնտեսության զարգացման բարձր տեմպերի պահպանման համար ունեն վճռորոշ նշանակություն: Դա է պատճառը, որ Հայաստանում օտարերկրյա ներդրումների խրախուսումը եղել է կառավարության ներդրումային քաղաքականության առանցքային կետերից մեկը:

Հայաստանի Հանրապետության կառավարության վարած ներդրումային քաղաքականության արդյունքում օտարերկրյա ներդրողների կողմից, 2000-2005 թթ.-ի ընթացքում Հայաստանի տնտեսության իրական հատվածում (առանց պետական կառավարման և բանկային համակարգով ստացվածի) իրականացված օտարերկրյա ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է 1465.7 մլն ԱՄՆ դոլար, որից ուղղակի ներդրումները՝ 961.5 մլն ԱՄՆ դոլար: Օտարերկրյա ուղղակի ներդրումների տարեկան միջին աճը 2000-2005 թթ կազմել է մոտ 31.3%:

Տնտեսական զարգացմանը նպաստում են մաս պետական ներդրումային ծրագրերը, որոնք ծավալվում են տնտեսության համար այնպիսի կարևորագույն ոլորտներում, ինչպիսիք են՝ տրանսպորտային ենթակառուցվածքները, ոռոգման համակարգը

և այլն: 2005 թվականին պետական ներդրումները կազմել են շուրջ 38.4 մլրդ դրամ և ուղղված են եղել հիմնականում ենթակառուցվածքների, այդ թվում՝ տրանսպորտային ենթակառուցվածքների, ոռոգման համակարգի զարգացմանը, ինչպես նաև դպրոցների հիմնանորոգմանը: Շարունակվել է պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների մասնավորեցման ճանապարհով ուղղակի օտարերկրյա ներդրումների ներգրավման քաղաքականությունը:

Զգալիորեն ընդլայնվել է ներդրումների փոխադարձ պաշտպանության և խրախուսման մասին տարբեր երկրների հետ կնքված պայմանագրերի ընդգրկման դաշտը (առ այսօր այդպիսիք ստորագրվել են 35 պետությունների հետ):



Հայաստանի տնտեսության խնայողությունները դեռևս բավարար չեն ներդրումների ծավալի կտրուկ մեծացման և տնտեսական աճի ներքին կայուն աղբյուրներ ստեղծելու համար: Միևնույն ժամանակ, մակրոտնտեսական կայունությունն ու երկրի ռիսկայնությունը նվազումն անհրաժեշտ հիմքեր են ստեղծել ներդրումների զգալի աճի համար:

Հատկանշական է, որ ներդրումային գործընթացում մեծացել է ներքին խնայողությունների դերը:

Այդ մասին է վկայում մասնավոր և պետական սպառման տեսակարար կշռի նվազումը ՀՆԱ-ում: 2005 թվականին մասնավոր և պետական սպառում /ՀՆԱ հարաբերակցությունը, ըստ մախնական զմախատականի, կազմել է 86,8 տոկոս:

Մասնավորեցում եւ պետական գույքի կառավարում

Արտադրական հզորությունների նկատմամբ սեփականության մասնավոր ձևի արմատավորումը և տնտեսական զարգացումներում վերջինիս դերի բարձրացումը հանդիսացել է վարվող պետական քաղաքականության կարևոր հարցերից մեկը: Դրանով պայմանավորված, ինչպես նաև օտարերկրյա և տեղական ներդրումների ներգրավման միջոցով տնտեսությունում մասնավոր սեփականության վրա հիմնված ընկերությունների թվի ավելացման շնորհիվ, 2005 թվականին շարունակվել է ԴՆԱ-ի կառուցվածքում մասնավոր հատվածի բաժնի մեծացումը, և վերջինս ապահովել է ԴՆԱ-ի ավելի քան 80 տոկոսի արտադրությունը:

2005 թվականի ընթացքում կառավարությունը շարունակել է պետական գույքի կառավարման ոլորտում որդեգրած պետական քաղաքականության իրագործումը՝ մասնավորեցման գործարքների իրականացմանը և վերահսկողությանը զուգահեռ հիմնական շեշտը դնելով պետական գույքի կառավարման բազմաբնույթ գործառույթների իրականացման վրա՝ հետագայում նպատակ ունենալով բարձրացնել պետական գույքի կառավարման արդյունավետությունը:


2005 թվականի ընթացքում մասնավորեցվել են անավարտ շինարարության օբյեկտներ, «փոքր» օբյեկտներ և 51 ընկերություն, որից ստացված միջոցները կազմել

են շուրջ 1.3 մլրդ դրամ և 75.8 մլն. ԱՄՆ դոլար (մախտրոլ տարի՝ 2.75 մլրդ դրամ և 45 մլն ԱՄՆ դոլար): Օտարվել է 41 միավոր անշարժ գույք:

Պետական գույքի մասնավորեցման և օտարման գործարքների արդյունքում գնորդների կողմից կատարված ներդրումները կազմել են շուրջ 705 մլն դրամ և 4,3 մլն ԱՄՆ դոլար, իսկ սոցիալական երաշխիքների մասով նշված գնորդների կողմից ստեղծվել է 2855 աշխատատեղ:

S

տոկոսադրույքներ



Երկարաժամկետ ներդրումների աճի հիմնական գրավականը տնտեսության ռիսկերի նվազումն է, ինչի հիմնական արտացոլումը տոկոսադրույքների փոփոխությունն է: Պետական պարտատոմսերի տարեկան տոկոսադրույքները նվազեցին նաև 2005 թվականին և կազմեցին 5,1 տոկոս:

Այս գործոնը նպաստել է 2005 թվականի ընթացքում վարկային տոկոսադրույքների նվազմանը: Առևտրային բանկերի վարկերի տոկոսադրույքը 2005 թվականի ընթացքում նվազել է մինչև 17.29 տոկոս, որն անմիջական դրական ազդեցություն է ունեցել ներդրումների իրականացման միջավայրի բարելավման վրա:



Ա

րտահանում

Րայաստանի տնտեսական աճի կարևոր գրավականներից է միջազգային տնտեսությանն ինտեգրման խորացումը: Մասնավորապես, ԱԷԿ անդամակցությունն ապահովեց 140-ից ավելի երկրներում հայաստանյան ապրանքների և ծառայությունների նկատմամբ ոչ խտրական մոտեցման կիրառումը: Այս երևույթը, հատկապես Հայաստանից արտահանվող ապրանքների ծավալների ավելացման միջոցով, մեծ նշանակություն է ունեցել վերջին տարիներին տնտեսական աճի և, այդպիսով, բնակչության դրամական եկամուտների ավելացման հարցում:

Հատկապես նկատելի է արտահանմանն ուղղված ապրանքատեսակների դիվերսիֆիկացման դրական միտումը: Դրա վառ ասպացույցն է արտահանման ծավալների (առանց ադամանդի, թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի) շարունակական ընդլայնումը:



Մասնավորապես, 2005 թվականին ապրանքների արտահանումը նախորդ տարվա համեմատ աճել է 31.5 տոկոսով, իսկ ապրանքների արտահանումն առանց ադամանդի աճել է 36.9 տոկոսով:



Փ որը և միջին ձեռնարկատիրություն

Վերջին տարիներին փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) աջակցությունը հանրապետությունում ստացավ համակարգված բնույթ: Տարեցտարի իրականություն է դառնում ՓՄՁ պետական աջակցության ծավալների ավելացումը, որն իրականացվում է ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերով:

ՓՄՁ պետական աջակցության 2005 թվականի ծրագրի իրականացման համար 37 պետական բյուջեից հատկացվել է 300 մլն դրամ: Բացի այդ, միջազգային, օտարերկրյա և տեղական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում վերոհիշյալ ծրագրի իրականացման ուղղությամբ ներգրավվել է շուրջ 52 մլն դրամ:

Շնորհիվ ՓՄՁ ոլորտին ցուցաբերվող հետևողական և նպատակային աջակցության, հնարավոր է եղել ապահովել զգալի որակական և քանակական աճ, որի վկայությունն է ՓՄՁ ոլորտի տեսակարար կշռի շարունակական ավելացումը:

Այսպես, արտահանման ծավալում ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը 2005 թվականին, ըստ մախնական գնահատականների, կազմել է 16.4 տոկոս՝

2004 թվականի 15.7 տոկոսի դիմաց: 2005 թվականին անհատ ձեռնարկատերերի և առևտրային կազմակերպությունների ընդհանուր թվաքանակում ՓՄՁ սուբյեկտները կազմել են ավելի քան 97 տոկոս, որից 48.3 տոկոսը գրանցվել են ք. Երևանում, իսկ 51.7 տոկոսը՝ 33 մարզերում:

Խոսուճ է նաև այն փաստը, որ 2005 թվականին բարելավվել է ՄԱԿ-ի հետազոտություններում կիրառվող ՓՄՁ զարգացման ինդեքսը, որն ըստ նախնական տվյալների, 2005 թվականին Դայաստանում կազմել է 147.8՝ 2004 թվականի 117.8 դիմաց: Այն ընդհանրական տնտեսական ցուցանիշ է, որը հիմնված լինելով 3 հիմնական գործոնների վրա, միաժամանակ բնութագրում է ԴՆԱ-ում մասնավոր հատվածի և ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշռի ավելացում, ինչպես նաև ՓՄՁ սուբյեկտներում ներգրավված աշխատուժի տեսակարար կշռի ավելացում զբաղվածների ընդհանուր թվաքանակում:

Վերջին 3 տարիներին ստեղծվել է շուրջ 25 հազար ՓՄՁ սուբյեկտ, իսկ միայն 2005 թվականին, ըստ գնահատականների, ստեղծվել է շուրջ 9500 նոր ՓՄՁ սուբյեկտ՝ ապահովելով ավելի քան 23 հազար նոր աշխատատեղ:




Քրոսաշրջություն

Վերջին տարիներին Հայաստանում զբոսաշրջությունը իր զարգացման տեմպերով և արդյունքներով հանրապետության առավել արագ և դինամիկ զարգացող ճյուղերից է, ինչը փաստվում է նաև վիճակագրական տվյալներով: Ներգնա այցելությունների միջին տարեկան աճը 2001թ.–ից սկսած պահպանվում է տարեկան 25 տոկոսի սահմաններում:

Հավաքագրված տվյալները բացահայտում են նաև այցելությունների աշխարհագրության ընդլայնման փաստը: Հայաստան այցելությունների գերակշիռ մասը բաժին է ընկնում հետևյալ տարածաշրջաններին՝ ԵՄ (29.2 %), Ամերիկա (22.5 %), ԱՊՀ (29.4 %), այլ երկրներ (18.9 %):

Ներգնա զբոսաշրջության զարգացմանը զուգահեռ, դինամիկ աճ է արձանագրվել ներքին զբոսաշրջությունում՝ 2005 թվականի տվյալներով 2004 թվականի դիմաց ապահովելով 12.7 % աճ: ՀՆԱ-ի կառուցվածքում և ծառայությունների արտահանման ծավալներով զբոսաշրջության ոլորտը հանրապետությունում առաջատար ոլորտներից է:

Վերջին տարիներին ստեղծվել են զբոսաշրջության ինդուստրիայի շահառուների միջև փոխհարաբերությունների ձևավորման, ստեղբաշխման հատվածի



որակի չափանիշների կարգավորման և Հայաստանի զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացման իրավական հիմքերը: Գրանցվել է հյուրանոցային, ռեստորանային, տրանսպորտային, ժամանցային, մշակութային ենթակառուցվածքների քանակական և որակական, ինչպես նաև զբոսաշրջային արդյունքի միջնորդավորված ծառայությունների առաջարկի կտրուկ աճ:



S

ԼՂԵԿԱՐՎԱԿԱՆ ԿՐԽՆՈՂՈՉԻԱՆԸ

ԼՂԻԿԱՆՈՒ ԿՐԻՄԱՆ, SS զարգացման տեմպերը պահպանվել են: Առաջատար ընկերությունների մեծ մասն ընդլայնել է արտադրության և ծառայությունների ծավալը: 2005 թվականի դրությամբ SS ոլորտում ակտիվ աշխատում են շուրջ 120 ձեռնարկություններ, աշխատատեղերի քանակն աճել է շուրջ 200-ով: ՀՆԱ-ում ոլորտի բաժինն արդեն կազմել է 1,7 % (2001 թվականին՝ ՀՆԱ 0,35 %), իսկ օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը՝ 14.4 մլն դոլար:

Իրականացված ծրագրերը (ցուցահանդեսներ, մրցույթներ, համաժողովներ) նպատակաուղղվել են արտադրության ընդլայնմանը, արտահանման խթանմանը, SS-ի ինտեգրմանը տնտեսության մյուս ճյուղեր, երիտասարդ մասնագետների պրոֆեսիոնալիզմի աստիճանի բացահայտմանը, մասնագետների վերապատրաստմանը և ուսուցմանը, նորարարական աշխատանքների զարգացմանը, ներդրումների ներգրավմանը: 2005 թվականին Թունիսում կայացած Տեղեկատվական հասարակության համաշխարհային գագաթաժողովի ընթացքում կայացած լավագույն ինտերակտիվ բովանդակության միջազգային մրցանակաբաշխությունում հայկական երկու սկավառակ բարձր որակի համար արժանացել են գլխավոր մրցանակի, համագոր-

ծակցության համաձայնագրի է ստորագրվել «ԱլկաՏել» ընկերության հետ, ինչպես նաև ICNM-ի՝ որպես Համաշխարհային զագաթաժողովի մրցանակաբաշխության կազմակերպության ներկայացուցիչ Սալզբուրգում (Ավստրիա), ՀՀ կառավարությունը ներկայացնող Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի եւ ՀՀ-ում ոչ պետական կառավարման կազմակերպություն հանդիսացող «Ինտերնետային տեխնոլոգիաների հիմնադրամի» միջեւ՝ տեղեկատվական եւ գիտական հասարակության զարգացման նպատակով էլեկտրոնային բովանդակության աշխատանքների եւ դրա հետ առնչվող խնդիրների խթանմանն աջակցելու վերաբերյալ: Այդ համաձայնագրով նախատեսվել է, որ «Ինտերնետային տեխնոլոգիաների հիմնադրամը» հանդիսանալու է եվրասիայում գործող տարածաշրջանային կենտրոն, ինչպես նաև 2006թ.-ին պետք է կազմակերպի էլեկտրոնային բովանդակության համաշխարհային զագաթաժողովն ու տարածաշրջանային հարթողների համար Գալա միջոցառումը: Համաշխարհային զագաթաժողովը, ըստ համաձայնագրի, կիրառվելու է ՀՀ վարչապետին առընթեր Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդը:



Մ

Կրթնադարպասում, չափազիպություն և համապատասխանության հավաստում

2005 թվականին իրականացված աշխատանքները հիմնականում ուղղվել են տեխնիկական խոչընդոտների վերացմանը, արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների անվտանգության առումով սպառողների իրավունքների և պետության շահերի պաշտպանությանը, արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների որակի բարձրացմանը և չափումների միասնականության ապահովմանը: 2005 թվականի ընթացքում հայրենական արտադրանքի և ծառայությունների որակի ու մրցունակության բարձրացման նպատակով ընդունվել և պետական գրանցում են ստացել 353-ից ավելի ազգային ստանդարտներ: Մշակվել և ընդունվել է 49 ՀՀ ստանդարտ: Դրանք ամբողջովին

Ներդաշնակեցված են գործող ISO և EN միջազգային ստանդարտներին, ուղղակի գործողության մեջ են դրվել 44 միջազգային ստանդարտներ, ինչպես նաև 250-ից ավելի միջպետական ստանդարտներ, որոնք նույնպես ներդաշնակեցված են միջազգային ստանդարտներին:

Չափումների միասնականության ապահովման նպատակով 2005 թվականին իրականացվել է 400 չափման միջոցի տեսակի հաստատում: 2005 թվականին հավատարմագրվել են 21 սերտիֆիկացման մարմիններ և 45 փորձարկման լաբորատորիա: Լայնածավալ աշխատանքներ են տարվել Հայաստանի Հանրապետությունում փորձարկման բազայի արդիականացման և ժամանակակից լաբորատորիաների ձեռքբերման ուղղությամբ:

ԱՂԿ-ին անդամակցելուց հետո, ստանձնած պարտավորությունները կատարելու նպատակով, լայնածավալ աշխատանքներ են կատարվել Հայաստանի Հանրապետությունում արտադրանքի, ծառայությունների անվտանգության պահանջները սահմանող տեխնիկական կանոնակարգերի մշակման գործում: 2005 թվականի ընթացքում ընդունվել են անվտանգության պահանջները սահմանող 10 տեխնիկական կանոնակարգեր:



Ա

նշարժ գույքի կադաստր

Անշարժ գույքի շուկաների արդյունավետությունը բարձրացնելու ճանապարհին շարունակվում են իրավունքների պետական գրանցման աշխատանքները, որոնք իրականացվել են համրապետության 108 համայնքներում: Մինչ օրս կատարվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների շուրջ 2 միլիոն պետական գրանցում, որից 1500.6 հազարը՝ առաջին պետական գրանցման աշխատանքների շրջանակներում՝ անվճար:

Կազմվել և Հողային օրենսգրքի պահանջների համաձայն ամփոփվել է ՀՀ հողային հաշվեկշիռը: Իրականացվել են համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերի սկզբնական հաշվառման աշխատանքները: Ավարտվել են Հայաստանի ազգային ատլասի ստեղծման աշխատանքները:

Տեղագրական քարտեզագրության ոլորտում շարունակվել են պետական մասշտաբային շարքի օդալուսանկարահանման նյութերի մշակման աշխատանքները: Կադաստրային քարտեզագրման աշխատանքներ են իրականացվել 3 մարզերի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող 284125 հա տարածքներում, որով հանրապետության բոլոր 10 մարզերում այս աշխատանքներն ավարտվեցին: Թարմացվել են 25 համայնքների կադաստրային քարտեզներ:

Հանրապետությունում 2005 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հողի հարկի բազաների ձևավորման աշխատանքների շրջանակներում գնահատվել են 1532253 միավոր (498386 հեկտար) հողեր, այդ թվում երևանում՝ 37620 միավոր (3601 հեկտար) հողեր: 2005 թվականին՝ 2000 թվականի համեմատությամբ, հողի հարկի բազաներն ավելացել են շուրջ 77192 հեկտարով: Վերը նշված աշխատանքների արդյունքում ստվերից դուրս բերվեց գույքը և համալրվեցին հողի հարկի բազաները:

740 համայնքների վարչական սահմաններում գտնվող 1314.1 հազ. հեկտար պետական սեփականության հողերից 846.0 հազ. հեկտարը փոխանցված է համայնքներին, այդ թվում 2005 թվականին՝ 771.6 հազար հեկտարից 517.1-ը:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ Համաշխարհային Բանկի “Doing Business 2008” պարբերականի կողմից Հայաստանի անշարժ գույքի կադաստրի համակարգը, գործընթացների պարզության և արդյունավետության առումով, աշխարհի 145 երկրների ցանկում ճանաչվել է 7-րդը (նախորդ տարվա համեմատությամբ բարելավել է երկու տեղով):



Գյուղատնտեսություն, շինարարություն, ծառայությունների ոլորտ

2005 թվականին գյուղատնտեսության ոլորտի իրական աճը կազմել է 11.2 տոկոս, շինարարության աճը՝ 35.1 տոկոս, տրանսպորտի և կապի ոլորտում ծառայությունների աճը՝ 13.2 տոկոս, առևտրի և հանրային սննդի ոլորտում աճը՝ 9.6 տոկոս: ՀՆԱ-ի աճի վրա ազդեցության իմաստով 2005 թվականին մեծ է եղել գյուղատնտեսության և շինարարության դերը, որոնց բաժին է ընկել 14,0 տոկոս տնտեսական աճի 8,0 տոկոսային կեսը: 2000-2005 թվականներին միջին տարեկան աճը գյուղատնտեսության ճյուղում կազմել է 7.2 տոկոս, արդյունաբերությունում՝ 8.2, իսկ շինարարությունում՝ 27.7 տոկոս: Շինարարության ճյուղի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ 2000 թվականի 10.3 տոկոս մակարդակից 2005 թվականին աճել է մինչև 21.7 տոկոսի:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել ագրարային ոլորտի իրավա-օրենսդրական հիմքերի բարելավման ուղղությամբ:



Բ

յուշետարային համակարգ

Կերջին տարիների հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված է եղել առանց հարկային բեռի բարձրացման հարկային ներուժի առավելագույն օգտագործմանը, նոր ծախսային ապառքների չկուտակմանը և կուտակված ապառքների մարմանը, ինչպես նաև պետական բյուջեի դեֆիցիտի աստիճանական կրճատմանը:

Բյուջետային գործընթացի կամխատեսելիության աստիճանը բարձրացնելու նպատակով հիմքեր ստեղծվեցին միջնաժամկետ ծախսային ծրագրերի մշակման և այն յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների շրջանակում ներառելու ուղղությամբ:

Ներդրումների և ձեռնարկատիրության զարգացման խոչընդոտների վերացման, տնտեսվարող սուբյեկտների միջև հարկման պայմանների ապահովման, հարկատուների և հարկային մարմինների փոխհարաբերությունների բարելավման, ինչպես նաև հարկային, մաքսային և պարտադիր վճարների գծով օրենսդրության կատարելագործման նպատակով 2005 թվականի ընթացքում մշակվել և իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնք իրենց արտացոլումն են ստացել Գայաստանի Գանրապետության կառավարության կողմից հաստատված 2005-2008 թվականների հար-

կային և մաքսային բարեփոխումների ծրագրում, ինչպես նաև հարկային ինքնագնահատման համակարգի ներդրման միջոցառումների ծրագրում:

2005 թվականին պետական բյուջեով նախատեսված 375.2 մլրդ դրամ եկամուտների և դրամաշնորհների դիմաց փաստացի ստացվել է 374.7 մլրդ դրամ, որից 321.5 մլրդ դրամը կազմում են հարկային եկամուտները: Պետական բյուջեի եկամուտներում գրանտների և հարկային եկամուտների աճը 2004 թվականի համեմատ կազմել է համապատասխանաբար 24.0 և 20.4 տոկոս: Նախատեսված չափով ապահովվել են նաև ոչ հարկային և կապիտալի գործառնություններից եկամուտները, որոնք կազմել են 41.6 մլրդ դրամ՝ աճելով մոտ երկու անգամ: 2005 թվականին հարկային եկամուտների աճը մեծապես պայմանավորված էր տնտեսական ակտիվության աճով և վարչարարության բարելավմամբ: 2005 թվականին շարունակվեց ուղղակի հարկերի (եկամտահարկի և շահութահարկի) առաջանցիկ աճի միտումը: Տարվա ընթացքում հարկային եկամուտների 20.4 տոկոս աճի պայմաններում եկամտային հարկերի աճը կազմել է 39.6 տոկոս: Ձուգահեռաբար բարձրացել է նաև հարկային գերավճարներ ունեցող տնտեսվարող սուբյեկտներին պետության կողմից հարկերի վերադարձի ցուցանիշը (իմնականում ներառում է արտահանողների ԱԱԳ-ի գումարները): 2005 թվականի ընթացքում տնտեսվարող սուբյեկտներին է վերադարձվել շուրջ 16.2 մլրդ դրամ, որը 2004 թվականի համեմատ աճել է մոտ 55 տոկոսով:

2005 թվականին հնարավոր եղավ ապահովել ոչ միայն պետական բյուջեի հարկային եկամուտների բացարձակ մեծության աճը, այլ և հարկային եկամուտներ / ՅՆԱ հարաբերության աճը: Այն կազմեց 14.4 տոկոս՝ 2004 թվականի համեմատությամբ աճելով 0.3 տոկոսային կետով:


Ծախսերի կառավարման արդյունավետության և կարգապահության բարձրացման շնորհիվ ընթացիկ ծախսերը կատարվել են օրենքով սահմանված ժամկետներում և դրա հետ մեկտեղ, նոր ապառքներ չեն կուտակվել:

Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի գերակայություններին համահունչ, 2005 թվականին սոցիալական ոլորտին ուղղվող ծախսերի աճի տեմպը առաջանցիկ է եղել պետական բյուջեի ծախսերի աճի նկատմամբ: Մասնավորապես, 2005 թվականի պետական բյուջեում սոցիալական ոլորտին ուղղվող ծախսերը նախորդ տարվա համեմատությամբ աճել են 27.1 տոկոսով, այն դեպքում, երբ պետական բյուջեի ընդհանուր ծախսերի աճը կազմել է 25.0 տոկոս: Կրթության ոլորտում ծախսերի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 28.5 տոկոս, առողջապահության ոլորտում՝ 25.9, իսկ սոցիալական ապահովության և ապահովագրության ոլորտում՝ 26.2 տոկոս:

	2007	2008	2009	2005
Պետ. բյուջեի ծախսերի աճը ըստ ոլորտային էկոն. հոնորար բիզն. ը	2.0	15.7	6.2	25.7
— քրե. ոլորտ	2.9	27.2	38.2	28.2
— արտ. օգնություն փոխառ.	-	22.2	26.0	27.2
— արտ. օգնել. կուլտուր. ստեղծություն	-2.9	22.0	19.8	26.2
Միջոցառումներ փոխ. ինտեր. ընդհանր.	-1.5	22.0	24.6	27.1


2. Ըստ 1998 թ. մարդաբանության:

Վերջին տարիների հարկաբյուջետային քաղականության հատկանշական ձեռքբերումներից է նաև պետական բյուջեի դեֆիցիտի մակարդակի կրճատումը մինչև ՀՆԱ-ի 1.9 տոկոս մակարդակը:



Դեֆիցիտի մակարդակի իջեցմանը զուգահեռ շարունակվել է պետական պարտքի կառավարման բարելավումը: Արտաքին պարտքի կառավարման ոլորտում քաղաքականությունն ուղղված է եղել արտոնյալ պայմաններով վարկերի ստացմանը և ոչ արտոնյալ վարկերի վաղաժամկետ մարմանը:

Վերջին տարիներին հատկանշական ձեռքբերումներից է պետական պարտքի մակարդակի կրճատումը, որը 2005 թվականի նախնական տվյալներով արդեն կազմեց ՀՆԱ-ի մոտ 23 տոկոսը:



Միջազգային ֆինանսական համագործակցության շրջանակներում 2005 թվականի ճշտված բյուջեով արտաքին արդյուրներից վարկերի ստացումը կազմել է 38.5 մլրդ դրամ (77 մլն ԱՄՆ դոլար), որից շուրջ 58.6 մլն ԱՄՆ դոլար՝ Համաշխարհային բանկի, 12.4 մլն ԱՄՆ դոլար՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի, 5.4 մլն ԱՄՆ

2 վարկի հատկացման վերաբերյալ: 2005 թվականի ընթացքում Համաշխարհային բանկի հետ նաև աշխատանքներ են իրականացվել ԱՎԿՎ-3-ի շրջանակներում 2006 թվականին իրականացվելիք քաղաքականության շուրջ:

Շարունակվել են պետական պարտատոմսերի (ՊՊ) շուկայի զարգացման դրական միտումները: 2005 թվականին պետական պարտատոմսերի եկամտաբերությունը դրսևորեց նվազման միտում՝ թողարկման ժամկետայնության զգալի աճի պայմաններում:

	Շրջանակային ծախսերի ծավալը (ՊՊ) ժամկետային	Շրջանակային ներգնախաղի ծավալը (ՊՊ) ե.ա.ա.
2000	137	24.22%
2001	219	20.08%
2002	253	16.42%
2003	323	13.72%
2004	751	6.01%
2005	1 311	7.3%

2005 թվականին տեղաբաշխված պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմեց 1007 օր, իսկ միջին կշռված եկամտաբերությունը՝ 5.1 տոկոս:

2000-2005 թվականներին պետական պարտատոմսերի ծավալներն ու ցուցանիշները.

	Ծրագրված / Գործարկված	Տարածություն / Թեղյալ	Պ.Պ. խառնուրդը (%)	Ցուցանիշներ / Ե.ա.ա. (%)	Ցուցանիշներ / ժ.ա.ա. (օր)
1995թ.	24.65	27.26	0.95	62.64	47
2005թ.	47.25	44.96	0.79	28.87	316
2001թ.	15.20	42.27	0.96	20.04	287
2002թ.	11.04	41.50	0.95	16.72	362
2003թ.	44.26	43.20	2.90	19.44	144
2004թ.	113.9	49.8	6.50	7.79	102
2005թ.	475.1	46.7	6.90	5.10	1077

2005 թվականին հաջողվեց խորացնել նախորդ տարիներին ձևավորված երկարաժամկետ միտումները և թողարկել ու տեղաբաշխել 8, 10, 12 և 15 տարի մարման ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր: 2005 թվականին կիրառված պարտքի կառավարման ռազմավարության տրամաբանական շարունակությունն է նաև 2006-2008 թվականներին ծրագրվող քաղաքականությունը, որը կրկին ուղղված է լինելու պարտքի ժամկետայնության երկարացմանն ու պարտքի էժանացմանը:



յուղացիական տնտեսություն

Վերջին տարիներին կառավարության համար արդիական է դարձել գյուղական վայրերի հիմնախնդիրների լուծումը, որի ուղղությամբ իրականացված ամենօրյա հետևողական աշխատանքները տալիս են իրենց դրական արդյունքները:

2005 թվականին աշխատանքներ են իրականացվել տնտեսվարող սուբյեկտներին բարձրորակ սերմերի (հացահատիկ, կարտոֆիլ), տնկանյութի, հանքային պարարտանյութերի, բույսերի պաշտպանության միջոցների մատակարարման աշխատանքների կազմակերպման աջակցության ուղղությամբ: Արդյունքում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները 2005 թվականին կազմել են 331.8 հազ. հա՝ նախորդ տարվա 325.2 հազ.հա դիմաց: Բանջարեղենի 63.0 հազ. տոննա բերքի հավելածն ամբողջությամբ ապահովվել է ինտենսիվ գործոնի բերքատվության ավելացման հաշվին: 2005 թվականին նկատելիորեն ավելացել են թարմ խաղողի արտահանման և վերամշակող կազմակերպությունների կողմից մթերման ծավալները: Դաշվետու տարում հիմնվել են շուրջ 1194 հա խաղողի և 1309 հա պտղատու այգիներ: Դանրապետությունում 2005 թվականին արտադրվել է ավելի քան 1.5 մլն խաղողի արմատակալ և 500-600 հազ. պտղատու տարբեր տեսակների տնկիներ:



Ջգալի աշխատանքներ են իրականացվել գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների կանխարգելման և տոհմային գործի բնագավառում: 2005 թվականին 2004 թվականի համեմատությամբ ավելացել է ինչպես գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը, այնպես էլ անասնաբուժական մթերքների արտադրության ծավալները:

Կառավարության և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ աշխատանքներ են իրականացվել գյուղատնտեսական ռիսկերի նվազեցման և բնական աղետների հետևանքների մեղմացման ուղղությամբ: Աշխատանքներ են իրականացվել գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար արտադրության պայմանների բարելավման ուղղությամբ, մասնավորապես՝ ավելի քան 18000 հա-ի վրա կատարվել են արոտավայրերի ջրարբիացման ծրագրեր:

Տարբեր վարկային ծրագրերով ֆինանսավորման, ինչպես նաև կատարված այլ մեծածավալ ներդրումների հաշվին, գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ընկերություններում կատարվել են արտադրության վերազինման, նոր տեխնոլոգիաների ներդրման, գործող հզորությունների ավելացման և նոր արտադրությունների գործարկման աշխատանքներ:

Հանրապետության գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի նորացման և համալրման նպատակով շարունակվել է նոր տեխնիկայի ձեռքբերումը:

Հանրապետության շուրջ 800 գյուղական համայնքներում 2005 թվականին իրականացվել են բազմաբնույթ խորհրդատվական ծառայություններ, այդ թվում՝ 842 ուսուցողական սեմինարներ, 161 դաշտային ցուցադրումներ, և տպագրվել են ագրարային ոլորտին առնչվող 615 խորհրդատվական նյութեր: Բացի այդ, գյուղացիական տնտեսությունների համար 2005 թվականի ընթացքում եթեր է արձակվել 61 հեռուստահաղորդում հանրապետական, 43-ը՝ մարզային հեռուստալիքներով, թողարկվել են 53 ռադիոհաղորդումներ, ինչպես նաև մշակվել են 106 գործարար ծրագրեր և մատուցվել 524 մարքեթինգային միջնորդություններ:



Կ

առավարման ոլորտ

Պետական կառավարում

2005 թ. պետական կառավարման ոլորտում բարեփոխումներն ուղղվել են պետական կառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը, գործառույթների հստակեցմանը, սահմանազատմանը, դրանց կրկնության եւ առանձին գործառույթների բացառմանը, տրամաբանական փոխկապվածության ապահովմանը: Քաղաքացիական ծառայության ոլորտում շարունակվել են աշխատանքները համակարգի կայացման և զարգացման ուղղությամբ: Հստակեցվել են քաղաքացիական ծառայության առանձին բաղադրիչների՝ մրցույթի, ատեստավորման, վերապատրաստման գործընթացները, մշակվել են դրանց կայացման ու զարգացման ծրագրերը: Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում քաղաքացիական ծառայողների կառավարչական հմտությունների, մարդկային ռեսուրսների կառավարման, քաղաքացիական ծառայողների կատարողականի գնահատման և դրանով պայմանավորված վարձատրության մոր համակարգերի ստեղծման ու զարգացման ուղղությամբ: Քաղաքացիական ծառա-

յողների բազային աշխատավարձը բարձրացվել է 50%-ով: Օրենսդրական հիմքեր են ստեղծվել համայնքային և փրկարար ծառայությունների զարգացման համար:

2005թ. նոյեմբերի 27-ին տեղի ունեցած 33 սահմանադրական փոփոխությունների հանրաքվեով էական առաջընթաց քայլ է կատարվել թե՛ դատական իշխանության անկախության մեծացման ուղղությամբ, և թե՛ իշխանությունների տարանջատման սկզբունքի հստակեցման, մարդու իրավունքների ինստիտուտների կատարելագործման առումով:

Պետական կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով շարունակվել են աշխատանքները պետական կառավարման համակարգի արդիականացման ուղղությամբ: Պետկառավարման մարմինները եւ նրանց աշխատանքային միավորները համապատասխանեցվում են ժամանակակից չափանիշներին՝ հազեցվելով անհրաժեշտ տեխնիկայով, համակարգչային ծրագրային ապահովմամբ, կապի եւ տեղեկատվության փոխանցման միջոցներով: Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, էլեկտրոնային գնումների նոր համակարգի ձևավորման ուղղությամբ:

Պետական կառավարման բարեփոխումների խորացումը շարունակվում է պետական ծառայությունների մատուցման մատչելիության, հասցեականության, գործառույթների միասնական «կենտրոնների» ձևավորման ուղղությամբ: Դրա օրինակներից է սոցիալական ծառայությունների մարզային կենտրոնների, առանձին պետական մարմիններում ծառայությունների մատուցման «մեկ պատուհանի» սկզբունքի կիրառումը:

2005թ. աշխատանքներ են տարվել 33 պետական մարմինների հրապարակային, թափանցիկ գործունեության մեծացման ուղղությամբ: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում տեղեկատվական կենտրոն-ընդունարանները հնարավորություն են տալիս ապահովելու կապը քաղաքացիների հետ, բարելավելու աշխատանքը քաղաքացիական հասարակության միավորների հետ:

Արդյունավետ գործող պետական կառավարման համակարգի առումով կարևորվել է կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումների իրականացումը և կոռուպցիայի դեմ պայքարի իրականացման համար համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծումը: Ըստ այդմ, ընդունվել և ուժի մեջ են մտել նոր օրենքներ, իսկ մի շարք գործող օրենսդրական ակտերում կատարվել են փոփոխություններ և լրացումներ: 2005 թվականին ընդունվել և ուժի մեջ է մտել «Հանցավոր ճանապարհով ստեղծված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 33 օրենքը, որը մշակվել է եվրոպայի խորհրդի Փողերի վլացման դեմ պայքարի փորձագետների կոմիտեի միջազգային չափանիշներին համապատասխան: Նշված օրենքով հանցավոր ճանապարհով ստեղծված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի լիազորված մարմին է ճանաչվել 33 Կենտրոնական բանկը, որի համակարգում ստեղծվել է պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանում:

Փոփոխություններ են կատարվել 33 քրեական օրենսգրքում, որը հստակեցնում է կոռուպցիոն հանցագործությունների դեպքում կիրառվող «պաշտոնատար անձ» հասկացությունը և կոռուպցիոն հանցագործություններին վերաբերող հոդվածները

ընդհանուր ամձամբ համապատասխանեցնում Գայաստանի Գանրապետության կողմից վավերացված կոռուպցիայի դեմ պայքարին ամենվիդ կրճվեցիաներով սահմանված չափանիշներին: Եսխասպատրաստվել և գործողության մեջ է դրվել կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրությունը: ԳԳ դատախազության համակարգում ձևավորվել է կոռուպցիայի դեմ պայքարի վարչություն:

Կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում դրական քայլ է նաև եվրամիության GRECO-ի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անցումային տնտեսությունների երկրների հակակոռուպցիոն ցանցի միջև համագործակցությունը, որի արդյունքում Գայաստանի Գանրապետությանը ներկայացվել են մի շարք երաշխավորություններ: Երաշխավորությունները կենսագործման են կոչվել հաստատված ժամանակացույցին համապատասխան, որի արդյունքում ԳԳ կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության ծրագիրը դարձել է ավելի ամբողջական և արդյունավետ:

ԳԳ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների իրականացման կատարողականի վերաբերյալ տեղեկանքն առավել հանգամանորեն ներկայացված է ԳԳ կառավարության ինտերնետային պաշտոնական էջում:

Տեղական ինքնակառավարում

Տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումներն ուղղված են եղել տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքների և պարտականությունների հստակեցմանը՝ նպատակ ունենալով ապահովել անհրաժեշտ նախադրյալներ իրական ինքնակառավարման կայացման ճանապարհին:

«Տեղական ինքնակառավարման մասին» ԳԳ օրենքում կատարված փոփոխություններով հստակեցվել են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, սահմանվել են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության հստակ և կանոնակարգված մեխանիզմները:

Ավարտվել է զույգսահարկի հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվությունը տեղական ինքնակառավարման մարմիններին փոխանցելու գործընթացը, իսկ տեղեկատվության ճշգրտմամբ հնարավոր կլինի իրատեսական դարձնել ֆինանսական համահարթեցման սկզբունքով պետական քյուլեից հատկացվող դոտացիաների, ինչպես նաև սուբսիդիաների և սուբսիդիաների հաշվարկման բազան:

2005 թվականին շարունակվել են աշխատանքները տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Գատկապես ուշադրության կենտրոնում է եղել և հատուկ հոգածության առարկա դարձել սահմանամերձ ու բարձր լեռնային բնակավայրերի առաջնահերթ հիմնախնդիրների լուծումը:

Տավուշի և Գեղարքունիքի, Արարատի և Վայոց Ձորի մարզերի համար իրականացվում են մարզերի տարածքային զարգացման ծրագրեր, որոնց կարևոր բաղադրիչն են հանդիսանում ներդրումային ծրագրերը, ինչպես նաև տարածքային կառավարման մարմինների կարողությունների հզորացումը:



ԵՆ

նրականության ցվածքներ

Ջրային տնտեսություն

Ջրային տնտեսությունում 2005 թվականին իրականացված աշխատանքներն ուղղված են եղել հիմնականում ոռոգման և խմելու ջրի ջրառի և ջրամատակարարման կետերում հաշվառման համակարգերի ներդրմանը, ջրամատակարարման տնտեսության մեծացմանն ու որակի բարելավմանը, համակարգում կորուստների նվազեցմանը, մեխանիկական եղանակով ոռոգման և խմելու ջրի մատակարարումն աստիճանաբար ինքնահոս եղանակով փոխարինելու միջոցով էլեկտրաէներգիայի ծախսի աստիճանական կրճատման ապահովմանը:

Գոտիական սակագների կիրառման միջոցով առանձին տարածաշրջաններում սոցիալական հնարավոր բացասական ազդեցությունը մեղմելու նպատակով ինչպես 2004, այնպես էլ 2005 թվականի համար ոռոգման համակարգի սուբսիդավորման քաղաքականությունը մշակվել է համահարթեցման սկզբունքով և, ըստ էության, ջրօգտագործողների ընկերությունների կողմից վաճառվող ջրի սակագինը չի գերազանցում 8.0 դրամը 1 խ-ի համար:

2005 թվականին Սևանա լճից բաց է թողնվել 143.99 մլն խմ. ջուր մախորդ տարվա 149.9 մլն խմ-ի և պլանային 150.0 մլն խմ-ի փոխարեն: Սևանա լիճ է տեղափոխվել 252.87 մլն. խմ. ջուր: 2005 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լճի մակարդակը կազմել է 1898.06 մ, որը մախորդ տարվա մույն ցուցանիշը գերազանցում է 41 սանտիմետրով:

Դամակարգում գործող վարկային և ներդրումային ծրագրերի շրջանակներում իրականացվել են մեծածավալ շինարարական աշխատանքներ: Դիսնցիզ կարելի է առանձնացնել հիմնական և օժանդակ կառույցների վերանորոգման, ջրամբարների մաքրման, նորոգման և կառուցման, ջրամատակարարման ցանցերի գոտիավորման, ջրագծերի և կոյուղագծերի կառուցման ու վերակառուցման աշխատանքները: Ծրագրերի շրջանակներում իրականացվել են նաև խորհրդատվական, մախագծման, զննման, տեխնիկական վերահսկման, աջակցության և այլ աշխատանքներ ու ծառայություններ:

Ընդհանուր առմամբ, մախատեսվում է ապահովել խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրերի իրականացումը՝ հիմնականում մախատակ ունենալով բարձրացնել դրանց շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը, ինչպես նաև կրճատել ջրի կորուստները և բարելավել ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը:

Ճանապարհային տնտեսություն

Մարդկանց և համայնքների մեկուսացվածության գործոնի չեզոքացման խնդրի լուծման ուղղությամբ շարունակվել է ճանապարհային տնտեսության զարգացման աշխատանքների իրականացումը, որոնց որակն առանձին դեպքերում անդրադառնում է նաև ապրանքաշրջանառության (հատկապես գյուղական) արագ և եժան իրականացման խնդրի վրա:

Նշվածով պայմանավորված 2005 թվականին մույնպես կարևորվել են կապիտալ ներդրումները ճանապարհային տնտեսության մեջ: Մասնավորապես, 2005 թվականին 77 պետական բյուջեից իրականացված ֆինանսավորման շնորհիվ կատարվել են մոտ 16.7 մլրդ դրամի ճանապարհաշինարարական և շահագործման աշխատանքներ:

Ընդ որում, 2005 թվականին իրականացվել են մի շարք ծրագրեր, այդ թվում միջպետական նշանակության 1324.3 կմ և համրապետական նշանակության 1495.8 կմ երկարությամբ ավտոճանապարհների ծմեռային պահպանություն, ընթացիկ նորոգում, համայնքային նշանակության ճանապարհների հիմնանորոգման մախագծում, 34 կամուրջների նորոգում:

Իրականացվել է Կապան-Շավ-Շվանիձոր-Մեղրի ռազմավարական նշանակություն ունեցող ավտոճանապարհի հիմնանորոգում, ինչպես նաև մոտ 110 կմ երկարությամբ 38 ճանապարհատվածների հիմնանորոգում:

Էներգետիկա

Յաշվետու տարում մշակվեց և ԳԳ կառավարության հավանությանն արժանացավ «Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համատեքստում էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարությունը», որում սահմանված են մինչև 2025-30թթ. էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնական խնդիրներն ու ուղղությունները:

Ավարտվեցին իրականացվող 220 կՎ լարման թվով 8 ենթակայանների վերազինման աշխատանքները, ինչպես նաև Տաթև ՅԷԿ-ի արագության կարգավորիչների արդիականացման աշխատանքները: Տարեվերջին գործարկվեց և սկսեց էլեկտրաէներգիա արտադրել Իրանի Իսլամական Հանրապետության տեխնիկական օգնությամբ Պուշկինի լեռնանցքում կառուցված 2,6 ՄՎտ հզորությամբ առաջին հողմաէլեկտրակայանը:

Էներգահամակարգի արտադրական հզորությունների ռեժիմների, ՅԷԿ-ի պլանային նախազգուշական վերանորոգման (ՊՆՎ-2005) աշխատանքների ու կատարման ժամկետի օպտիմալացման արդյունքում (շնորհիվ թարմ միջուկային վառելիքի ժամանակին և բացառապես սեփական ֆինանսական միջոցների հաշվին ներկրման), ՅԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկը 2005թ. ընթացքում արտադրել է 2716 մլն կՎտ/ժ էլեկտրական էներգիա՝ հանրապետությունում արտադրված ընդհանուր էլեկտրական էներգիայի քանակի շուրջ 43,0%-ը, որն առավելագույնն է 1995թ. վերաթողարկումից հետո ընկած ժամանակահատվածում:

2005թ. արդյունքներով ԳԳ էներգահամակարգի պետական ընկերությունների ֆինանսական հոսքերի ընթացիկ հաշվեկշիռը եղել է դրական և նախնական տվյալներով կազմել է շուրջ 4.0 մլրդ դրամ (ինչպես և ճախորդ երկու տարիների արդյունքներով 2004 թ. համար՝ 3.2 մլրդ դրամ, 2003թ. համար՝ 0.7 մլրդ դրամ), որով մեկ անգամ ևս հավաստվում է, որ ընկերությունների ֆինանսական առողջացման գործընթացն ավարտված է, և վերջիններիս գործունեությունն իրականացվում է առևտրային սկզբունքներով:

Նախատեսված ժամանակացույցի գերազանցումով ընթանում է Իրան-Հայաստան գազամուղի Մեդրի-Քաջարան հատվածի շինարարությունը: Մեկնարկեցին Երևանի ՋԷԿ-ի տարածքում նոր համակցված ցիկլով էներգաբլոկ կառուցելու և «Ալավերդի-2» ենթակայանի վերակառուցման աշխատանքները:

2005 թվականի ընթացքում իրականացված գազաֆիկացման ընդլայնման աշխատանքների շնորհիվ հանրապետության բնական գազից օգտվողների թիվն ավելացել է 91 988 բաժանորդով և կազմել է 364 115:

Քաղաքացիական ավիացիա

2005 թվականին շարունակվել է ավիացիայի ոլորտին վերաբերող քաղաքականության հետևողական իրականացումը: 2005 թվականին հիմնական խնդիրներից էր Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի իրավական կարգավորման համակարգի ձևավորումը՝ որպես գերակա խնդիր:

2005 թվականի ընթացքում միջազգային ավիացիոն կառույցներին Հայաստանի Հանրապետության ավիացիոն համակարգի ինտեգրման ուղղությամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնց արդյունքում, 2005 թվականի նոյեմբերի 16-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվել է Հայաստանի Հանրապետության անդամակցությունը «ԵՎՐԱԿՈՆՏՐՈՆ» կազմակերպությանը: Կազմակերպությունը ԻԿԱՕ գործող ստանդարտների հիման վրա մշակում է օդային երթևեկության բնագավառին վերաբերող ավելի խստացված կանոնակարգեր ու պահանջներ Եվրոպական տարածաշրջանի համար, որոնք ուղղված են թռիչքների անվտանգության ապահովմանը:

2005 թվականի ընթացքում արմատապես բարեփոխվել է «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերության ներդրումային քաղաքականությունը, որի արդյունքում կարևորվել է նոր ուղևորային համալիրի կառուցումը, ինչպես նաև «Զվարթնոց» օդանավակայանի ներկայիս սպասարկումների որակի բարձրացումն ու նոր տեխնոլոգիաների ներգրավումը: Համալիրի ժամանման հատվածը կգործի 2006թ. վերջին, իսկ ամբողջությամբ այն շահագործման կհանձնվի 2007 թվականին: Նոր համալիրը էապես կնպաստի մեկնող և ժամանող ուղևորների, նրանց ուղեբեռների սպասարկման գործընթացի բարելավմանը՝ միջազգային չափանիշներին համապատասխան:



Մ

ոցիալական ոլորտ

Կրթություն

Կրթության ոլորտում կառավարության կողմից իրականացված քաղաքականությունն ուղղված է եղել կրթության որակի, մատչելիության և արդյունավետության բարձրացմանը, օրենսդրական դաշտի կատարելագործմանը, ուշադրության կենտրոնում է եղել կրթական համակարգի պահպանումն ու հետագա զարգացումը՝ որպես միջազգային ասպարեզում երկրի մրցունակությունն ապահովելու գրավական: Խնդրի իրագործումն ապահովվել է համակարգի աստիճանական բարեփոխման միջոցով:

2005 թվականին կրթության ոլորտի ծախսերը 2004 թվականի համեմատությամբ (նախնական տվյալներով) աճել են շուրջ 28.5 տոկոսով: Հանրակրթության ոլորտում ուսուցիչների և վարչական անձնակազմի աշխատավարձերի բարձրացումը կրթության անհրաժեշտ որակի ապահովման կարևոր նախապայմանն է: Կառավարության այդ քաղաքականության հետևողական իրականացումն էլ հենց, դարձել է կրթության բնագավառում պետական ծախսերի աճի առանցքային գործոններից մեկը: Մասնավորապես, ուսուցիչների միջին ամսական հաշվարկային աշխատավարձի բարձրա-

ցումը 2003թ. կազմել է 20 տոկոս, 2004թ.՝ 66.5 տոկոս, իսկ 2005թ.՝ 65.3 տոկոս՝ հասնելով շուրջ 50.2 հազար դրամի:

2003-2005թթ. հանրակրթական դպրոցներն ուսուցչական կադրերով ապահովվելու նպատակով սահմանամերձ լեռնային և բարձր լեռնային բնակավայրեր են գործուղվել 196 մանկավարժական կադրեր: 2005թ. մանկավարժական բուհերում կատարվել է 99 ուսանողների նպատակային ընդունելություն (առկա ուսուցման համակարգում):

Կրթության որակի բարձրացման և համապատասխանության ապահովման տեսանկյունից հատուկ ուշադրություն է դարձվում ուսուցիչների վերապատրաստման խնդիրներին: Մասնավորապես, վերապատրաստման գործընթացն ապահովվելու նպատակով հանրապետության մարզերում ձևավորվել են Կրթության ազգային ինստիտուտի մասնաճյուղեր, դպրոց-կենտրոններ, ձևավորվել է դասախոսական անձնակազմ: 2005 թվականին սկսվել է ուսուցիչների վերապատրաստման առաջին փուլը, որը կշարունակվի նաև առաջիկա տարիներին: Միաժամանակ, ուսուցիչների վերապատրաստումներ են իրականացվել նաև պետպատվերի շրջանակներում ու միջազգային մի շարք կազմակերպությունների աջակցությամբ: Այդ ծրագրերում ընդգրկվել են շուրջ 9000 ուսուցիչներ: Կազմակերպվել են տարաբնույթ սեմինարներ ու խորհրդակցություններ, որոնց մասնակցել է ավելի քան 18 հազար ուսուցիչ:

2005 թվականի ընթացքում հանրակրթության ոլորտում իրականացվել են մեծ ծավալի շինվերանորոգման աշխատանքներ: Պետությունով շինարարական աշխատանքների համար հատկացված 7203.25 մլն դրամի շրջանակներում կառուցվել է 8 նոր դպրոց և հիմնանորոգվել՝ 144-ը: Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի պետությունից համաֆինանսավորվող ծրագրերով նախատեսված 9.25 մլն. դոլար հատկացումների հաշվին կառուցվել է 50 դպրոցական շենք և հիմնանորոգվել 111-ը:

Հանրակրթական համակարգը տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներով զինելու նպատակով հիմնադրվեց Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը, որի շրջանակներում ձևավորվել է համակարգիչների շրջանառու ֆոնդ: Այն հնարավորություն է տալիս սահմանափակ միջոցների պայմաններում մատակարարման պայմանագրերի և ստացված դիմում-հայտերի հիման վրա դպրոցներն ապահովել համակարգիչներով՝ դրանց դիմաց հետագա վճարման պայմանով:

Բարեփոխումների մյուս ուղղությունը կրթության որակի գնահատման նոր համակարգի ներդրումն է: 2005թ. մշակվել են գնահատման և թեստավորման համակարգի գործունեության սկզբունքները, «Հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների ավարտական և պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության միասնական ընունությունների առաջադրանքների (թեստերի) փորձարկման ընթացակարգը» և սովորողների զիտելիքների գնահատման թեստերի մեուշորինակները հանրակրթական չորս առարկաների գծով, իրականացվել է դրանց փորձարկումը Երևանի մարզում:

2005թ. ընթացքում միջնակարգ կրթության ոլորտում պետական միասնական քաղաքականության իրականացման, կրթության որակի ապահովման և օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով մշակվել է «Միջնակարգ կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ինչպես նաև ընդունվել է «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքը: Վերջինիս արդյունքում սկսվել է կրթության պետա-

կան տեսչության ձևավորման գործընթացը:

2005 թվականին ընդունվել է «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքը, որը կոչված է կարգավորելու նախադպրոցական կրթության համակարգի գործունեության և զարգացման իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը:

Մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը: Մշակվել է նաև «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացման գերակայությունները և 2005-2008 թթ. գործողությունների պլանը»: Այս ոլորտի կարևոր ձեռքբերումներից էր արհեստագործական ուսումնարանների վերաբացումը. մասնավորապես, 2005 թվականին հիմնադրվել է Քաջարանի արհեստագործական ուսումնարանը: Մշակվել և հաստատվել է միջին մասնագիտական կրթության 11 մասնագիտության գծով պետական կրթական չափորոշիչ:

Բարձրագույն կրթության բնագավառում բարեփոխումները հիմնականում օրենսդրական կարգավորման ու կանոնակարգման բնույթ են կրել: Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում կարևորագույն արդյունքներն են եղել անցումը երկաստիճան համակարգին, ինչպես նաև բուհական մասնագիտությունների չափորոշիչների մշակումը:

2005 թվականին Հայաստանը միացավ Բոլոնյան գործընթացին, ինչը կապահովի Հայաստանի բարձրագույն կրթության ինտեգրումը եվրոպական միասնական կրթական համակարգին:

2005թ. ընթացքում քննարկվել է կրթական ծրագրերի լիցենզավորման 51 հայտ և տրվել է 49 լիցենզիա, դադարեցվել է 8 ուսումնական հաստատության գործունեությունը, կասեցվել է 5 կրթական գործունեության լիցենզիայի գործողությունը: Հավատարմագրման գործընթացի արդյունքում 30 մասնագիտությունների գծով տրվել են պետական հավատարմագրեր, հանրապետության 8 հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվել է ուսուցման որակի վերահսկողություն:

Շարունակվել է գիտական կադրերի պատրաստման գործընթացը: 2005թ. գիտական աստիճանի վկայագիր տրվել է 475 (այդ թվում՝ 52-ը գիտության դոկտորի) գիտնականի:

Առողջապահություն

Առողջապահության համակարգի կենսագործունեության բարելավմանն ու զարգացմանը նպատակաուղղված իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնց հիմքում խնդիր է դրվել եղած միջոցների ու ներուժի առկա պայմաններում առավելագույնս ապահովել քաղաքացու առողջության պահպանման սահմանադրական իրավունքը, բարձրացնել պետության կողմից երաշխավորված բնակչության համար անվճար բժշկական օգնության իրական մատչելիությունը:

